չինուածքն։ Ի հասանիլ հրովարտակին՝ դատաւորն առեալ ընդ իւր զմեծամեծս քաղաքին եկ 'ի քննութիւն, եւ 'ի չգտանել նորա զայնպիսի վնասակար իրս, ծանոյց 'ի Դուռն թէ քրիստոնեայք քաղաքիս ոչ են արարեալ զայնպիսի իրս։ Ծառատունկք ձիթենեաց 'ի վաղեմի ժամանակաց հաստատեալ են օրինօք դատարանի։ Իսկ Հայք՝ որք ունին պարտէզս և զձիթենիս 'ի ներքս 'ի պարսպին և արտաքոյ նորին, հաստատեալ են հրովարտակաւ Սուլթան Մուրատին, որպէս յայտ արար մեզ Մինաս վարդապետն Հայոց, ըստ օրինակիս յայսմիկ ծանուցանել 'ի Դուռն, (1699)։

Եւ զկնի այսմ այլազգիք Սիոնի յարուցեալ 'ի վերայ Մինաս Պատրիարքի, պահանջէին 'ի նմանէ բազում ինչ վասն պարտիզի գերեզմանատան, մերձ 'ի վանս Փրկչի։ Թէպէտեւ Մինաս վարդապետ գնացեալ առ դատաւորն եցոյց առաջի ժողովոյն զհրովարտակս և զվաւերական գրեանս վասն տեղւոյն այնորիկ. եւ թէ օրպէս ժառանգեալ են զայն Հայք 'ի սկզբանէ անտի. Թէպէտեւ սաստեաց նոցա դատաւորն եւ խստագոյնս պատուիրեաց մի երբէք հակառակիլ ընդ ազգին Հայոց վասն այնր տեղւոյ։ սակայն նոքա ոչ մատուցեալ ունկն բանից նորին, դարձեալ նեղէին եւ խնդրէին զդուռարս դրամոց 'ի միաբանաց։ Եւ իբրեւ ոչ կարացին յագեցուցանել զագահութիւնս նոցա, սպառնացան արմատախիլ առնել զտունկս ձիթենեաց և գրաւել զտեղին. զի ասէին ունիմք հրովարտակ վասն այսր։ Նեղեալ յոյժ Մինաս վարդապետի մատոյց զիր աղաչանաց 'ի Դուռն եւ խնդրեաց սանձել զմոլեգնութիւնս նոցա։ Գրեցաւ հրովարտակ առ դատաւորն Երուսաղէմի և առ քաղաքապետն վախճան տալ հակառակութեանց և նեղութեանց այլազգեացն Սիոնի եւ զանհնազանդսն օրինաց եւ հրամանաց Արքայի՝ ծանուցանել 'ի Դուռն. \\\\ (1699)։

Ի սմին ժամանակի Երզնկացի Աւետիք վարդապետն նստեալ էր յԱթոռ Պատրիարքութեան 'ի Կոստանդնուպոլիս։ Սա գրեաց զիր յԵրուսաղէմ առ Մինաս վարդապետ, և նա արար նմա պատասխանի սիրով՝ խարեալ 'ի պատիր բանից նորա, և առաքեաց զայն առ նա ընծայիւք,